ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

«ԳՄՄՀ-ՀԲՄԽԾՁԲ-25/28» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Մարտունի **01.12.2025թ. 09:30**

Նիստին մասնակցել են հանձնաժողովի նախագահ՝ Ա. Քոչարյանը ,անդամներ՝ Վ.Թամոյանը, Ի. Գևորգյանը, Թ. Դավթյանը, Ս. Աբրոյանը և հանձնաժողովի քարտուղար ՝ Կ. Սիմոնյանը

1. **ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

   Հանձնաժողովը որոշեց հաստատել նիստի հետևյալ օրակարգը

   1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
   2. Ընթացակարգի ներկայացված հայտերում կատարված շտկումների մասին:
   3. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու, պայմանագիր կնքելու որոշման , և անգործության ժամկետ հայտարարելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0

2. «ԳՄՄՀ-ՀԲՄԽԾՁԲ-25/28» ծածկագրով գնման ընթացակարգի ներկայացված հայտերում կատարված շտկումների մասին:

2.1 Հրավերի սահմանված կարգի պահանջներին համապատասխան մասնակիցներ **«Վոլտ Ամպեր» ՍՊԸ -ի և «ԿՈՓ» ՍՊԸ-ի** հայտերում արձանագրվել էին հրավերի սահմանված կարգի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ուստի հանձնաժողովը կասեցրել էր նիստը և հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում էր ուղարկել մասնակցին ՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

2.2 Հանձնաժողովը ուսումնասիրեց **«Վոլտ Ամպեր» ՍՊԸ -ի և «ԿՈՓ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացրած շտկումները :

2.3 Մասնակիցների կողմից մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկվել են բոլոր անհամապատասխանությունները: Ուստի գնահատող հանձնաժողովի կողմից «ԿՈՓ» ՍՊԸ -ի և «Վոլտ Ամպեր» ՍՊԸ -ի, «Գրանդ Ինսփեքշն» ՍՊԸ -ի և «Կայուն զարգացման ներդրումային հիմնադրամ» ՍՊԸ-ի հայտերը գնահատվել են բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0

3. Ընտրված մասնակիցների և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու ինչպես նաև անգործության ժամկետ սահմանելու մասին

3.1 Ընտրված մասնակիցների և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին

3.2 «**ԳՄՄՀ-ՀԲՄԽԾՁԲ-25/28**» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին , 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել **«ԿՈՓ» ՍՊԸ -Ն**, որպես ոչ գնային պայմաններով բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

3.3 «**ԳՄՄՀ-ՀԲՄԽԾՁԲ-25/28**» ծածկագրով գնման ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել **«Կայուն զարգացման ներդրումային հիմնադրամ» ՍՊԸ -Ն**, որպես ոչ գնային պայմաններով բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

3.4 «**ԳՄՄՀ-ՀԲՄԽԾՁԲ-25/28**» ծածկագրով գնման ընթացակարգի 5-րդ չափաբաժնի համար որ մի հայտ չի ներկայացվել:

3.5 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների համար անգործության ժամկետ սահմանելէ 10 օրացուցային օր՝ ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի: Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված մասնակցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

3.6 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն 4-րդ և 5-րդ չափաբաժինների համար անգործության ժամկետ չի սահմանվում:Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը , հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պայմանագրի կնքման իրավասության առաջացման օրը ընտրված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

3.7 Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն «**ԳՄՄՀ-ՀԲՄԽԾՁԲ-25/28**» ծածկագրով գնման ընթացակարգի 5-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Քոչարյան

Անդամներ՝ _____ Վ. Թամոյան

_____ Ի. Գևորգյան

_____ Թ.Դավթյան

_____ Ս.Աբրոյան

Քարտուղար՝ _____ Կարեն Սիմոնյան